Զինծառայողների
Ապահովագրության
Հիմնադրամ

Միասին՝ զինվորիս կողքին

ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ (ԶԱՀ)

2022Թ. 3-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՆԿԻՐԱԲԵՐԵԼ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Զինծառայողների Ապահովագրության Հիմնադրամ

Ֆոնդերի կառավարում եվ ֆինանսական վերլուծություն

ԶԱՀ ամփոփ պատմությունը, առաքելությունը, տեսլականը և արժեքները

ԶԱՀ գործառնությունները 2017-2022թթ. ֆինանսական տարիների համար, սահող գնահատականով (ՍԳ)

ԶԱՀ շահառուները և վճարված հատուցումները՝ 2022թ. 1-3-րդ եռամսյակներում, տարեսկզբից մինչև օրս (ՏՄՕ)

ԶԱՀ նվիրատվությունները 2017-2022թթ. ֆինանսական տարվա 1-3-րդ եռամսյակներում

ԶԱՀ շահառուների սոցիալական ծրագրերը և համագործակցությունը

ԶԱՀ զարգացման ուղին դեպի ֆինանսական անկախություն

2021թ. անկախ աուդիտորական հաշվետվություն

ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ (ԶԱՀ)

2022Թ. 3-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԶԱՀ ԱՄՓՈՓ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ, ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ, ՏԵՍԼԱԿԱՆԸ ԵՎ ԱՐԺԵՔՆԵՐԸ

Զինծառայողների ապահովագրության հիմնադրամը (ԶԱՀ) ստեղծվել է 2017թ.՝ հանուն ապագա սերունդների խաղաղության ու անվտանգության և հայրենիքի ու նրա սահմանների պաշտպանության ժամանակ զոհված, անհայտ բացակայող և հաշմանդամ դարձած զինծառայողներին և նրանց ընտանիքներին կայուն, արդար հատուցում ապահովելու համար: ԶԱՀ-ը եզակի հիմնադրամ է տարածաշրջանում, որի շրջանակներում Հայաստանի և Արցախի բոլոր աշխատող քաղաքացիները պարտադիր վճարներ են կատարում: Սփյուռքահայերը նույնպես աջակցում են Հիմնադրամին՝ կամավոր նվիրաբերություններով: Այսպիսով, Հիմնադրամը մի համահայկական նախաձեռնություն է, որի նպատակն է ապահովել կյանքը և առողջությունը հանուն Հայաստանի անվտանգության զոհաբերած զինվորների և նրանց ընտանիքների բարեկեցությունը:

Հիմնադրամը գործում է համաձայն Հայաստանի Հանրապետության **օրենքների**: Հիմնադրամի միջոցները գոյանում են Հայաստանում և Արցախում հարկատուների պարտադիր ամսական վճարումներից (ըստ եկամտի մակարդակի), ամբողջ աշխարհից ստացված կամավոր նվիրաբերություններից, ինչպես նաև ԶԱՀ ակտիվների կառավարումից: ԶԱՀ կայքը տեղեկատվություն է տրամադրում ինչպես պարտադիր վճարումների, նվիրաբերությունների, այնպես էլ ԶԱՀ-ի շահառուներին կատարված հատուցման վճարումների վերաբերյալ: Հիմնադրամն ամեն տարի անկախ աուդիտ է անցկացնում, և ԶԱՀ-ի կայքը ներկայացնում է այդ **հաշվետվությունները**, ինչպես նաև ԶԱՀ-ի տնօրենի **հաշվետվությունը**:

ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ

Հայրենիքը պաշտպանելիս զոհված, անհայտ բացակայող և հաշմանդամ դարձած զինծառայողների և նրանց ընտանիքների բարեկեցության համար ապահովել կայուն, արդարացի հատուցում պարտադիր և կամավոր վճարների միջոցով:

ՏԵՍԼԱԿԱՆ

Ստեղծել կյանքի ապահովագրության հիմնադրամի եզակի մոդել, որը միավորում է համաշխարհային հայ համայնքին՝ հանուն մեր շահառուների բարեկեցության և բարգավաճման, համագործակցելով Հայաստանի կառավարության և հայկական սփյուռքի հիմնական շահակից կողմերի հետ:

ԱՐԺԵՔՆԵՐ

ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆ, ՀԱԾՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ ԲՈԼՈՐԻ ՀԱՄԱՐ

Այսօր մեր պարտքն է կանգնել զոհված, հաշմանդամ դարձած և անհայտ բացակայող զինվորների ընտանիքների կողքին:

ԶԱՀ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 2017-2022ԹԹ. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԱՐԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ, ՍԱՀՈՂ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՈՎ (ՍԳ)

Զինծառայողների Ապահովագրության Հիմնադրամ

2020թ. պատերազմից հետո 2021թ. ԶԱՀ-ի համար եղավ ճգնաժամի կառավարման տարի՝ ինչպես գործառնական, այնպես էլ կառուցվածքային առումով: Իսկ 2022թ. վերականգնման տարի է՝ ակտիվների պահուստային ֆոնդի ստեղծման և ամսական կանոնավոր հատուցումների առումով:

2022թ. սեպտեմբերի 12-13-ին Ադրբեջանի կողմից պատերազմական գործողությունների էսկալացիան կավելացնի ԶԱՀ-ի պարտավորությունները ևս 207 (ենթակա է վերջնական հաստատման պետական մարմնի կողմից) շահառուների համար միանվագ և կանոնավոր ամսական վճարումներով, ինչը կկազմի լրացուցիչ 2,11 մլրդ ՀՀ դրամ, և այն կարճաժամկետ կտրվածքում մեծ ազդեցություն չի ունենա ԶԱՀ-ի ֆինանսական արդյունքների վրա:

Ինչ վերաբերում է 2022թ. 3-րդ եռամսյակի և մինչև տարվա վերջը մնացած ժամանակահատվածի սահող գնահատականին, կանխատեսվում է, որ ԶԱՀ-ը կունենա մոտավորապես 8% եկամտի աճ, ինչը պայմանավորված է պարտադիր վճարների 14% աճով և ակտիվների կառավարման եկամուտների 56% աճով՝ չնայած նվիրաբերությունների զգալի անկմանը -62% չափով:

Գնահատվում է, որ 2022թ. Հիմնադրամի եկամտի այն մասը, որը վերագրվում է պարտադիր վճարներին, կաճի մինչև 90%՝ համեմատած 2021թ. 85%-ի հետ: Ի հակադրություն դրան՝ նվիրաբերություններին վերագրվող եկամտի մասը 2021թ. 4%-ից կիջնի մինչև 1% 2022թ.-ին: Գնահատվում է նաև, որ ակտիվների կառավարմանը վերագրվող եկամտի մասը կցուցաբերի դրական 3 տոկոսային կետ աճ՝ 2021թ. 5%-ից մինչև 8% 2022թ., և ակտիվների կառավարումից ստացված եկամուտը կաճի 56%-ով:

Հատուցումների անկումը -61%-ով բացատրվում է 2021թ. հետպատերազմական ժամանակահատվածում միանվագ վճարումների մեծ ծավալով, որը չի վերաբերում 2022թ., քանի որ շահառուները ստանում են միայն իրենց ամսական հատուցումները:

ՄԼՐԴ ԴՐԱՄ	2017	2018	2019	2020	2021	2022ՍԳ	2022 ՍԳ/ՆՏ	Ի հակ. խառը 2021	Ի հակ. խառը 2022
Եկամուտ պարտադիր վճարներից	5.9	7.4	8.5	9.1	29.1	33.2	14%	85%	90%
Նվիրաբերություններ	0.1	0.1	0.1	7.0	1.3	0.5	-62%	4%	1%
Կամուրջ*	-	-	-	1.0	1.5	0.2	-87%	4%	1%
ՀՀԿԲ**	-	-	-	-	0.3	-	-100%	1%	0%
Ակտիվների կառավարում	0.2	0.8	1.6	2.4	1.8	2.9	56%	5%	8%
Այլ եկամուտներ տուգանքներից	-	-	-	-	-	-		0%	0%
ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏ	**6.2**	**8.3**	**10.2**	**19.5**	**34.0**	**36.8**	**8%**	**100%**	**100%**
Հատուցումներ	0.4	0.4	0.8	8.0	44.5	17.3	-61%	98%	98%
Վարչական ծախսեր	-	-	-	-	-	0.3		1.44%	1.44%
Կապիտալ ծախսեր	-				0.1	0.00	-95%	0.03%	0.03%
Գործառնական ծախսեր	-	-	-	-	0.1	0.03	85%	0.14%	0.14%
Այլ	-	0.0	0.0	-	-	-			
ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	**0.4**	**0.4**	**0.8**	**8.0**	**44.7**	**17.6**	**-61%**	**100%**	**100%**

*** - Կամուրջ** – ՀՀ կառավարության կողմից ֆինանսավորվող ծրագիր՝ նախքան ԶԱՀ շահառու դառնալը ծանր վիրավորված կամ անհայտ բացակայող զինծառայողներին հատուցում տալու համար: Այս ծրագրով նախատեսվում է հատուցում 21 ամսվա ընթացքում՝ 300,000 ՀՀ դրամի չափով:

****- ՀՀ Կենտրոնական բանկի (ՀՀԿԲ) ներդրում** – 2021թ. ընթացքում կատարված բոլոր ծախսերը ֆինանսավորել է ՀՀ Կենտրոնական բանկը: Ֆինանսավորումը կարգավորվում է օրենքով և նախկինում հաստատվել է ԿԲ Խորհրդի կողմից:

ԶԱՀ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 2017-2022ԹԹ. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԱՐԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ, ՍԱՀՈՂ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՈՎ (ՍԳ)

Զինծառայողների Ապահովագրության Հիմնադրամ

Ենթադրվում է, որ 2022-ին՝ համեմատած 2021-ի հետ ընդհանուր եկամուտը կաճի 8%-ով, իսկ ընդհանուր ծախսերը կնվազեն -61%-ով

ԶԱՀ 2017-22թթ. եկամուտը՝ ծախսերի համեմատ, ՄԼՐԴ ՀՀ ԴՐԱՄ



2022թ. 1-ին եռամսյակից մինչև 3-րդ եռամսյակի ավարտը գրանցվել է եկամտի աճ մոտ 15%-ով՝ պայմանավորված պարտադիր վճարների 24% աճով, ինչը բացատրվում է զբաղված բնակչության թվի աճով՝ 681 հազար, 2022թ. հունիսի դրությամբ, ինչը 6%-ով բարձր է 2021թ. նույն ժամանակահատվածի համեմատ: Ի հակադրություն, նվիրաբերությունների մասնաբաժինը նվազել է մինչև -61%՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ նվիրաբերողների հենքը մեծացնելու համար ներդրումներ չեն արվել:

Տարվա սկզբից մինչև օրս 1-3 եռամսյակներում ԶԱՀ եկամտի մասնաբաժինը, որը վերագրվում է պարտադիր վճարներին, աճել է մինչև 90%, համեմատած 2021թ. նույն ժամանակահատվածի 83%-ի հետ: Ակտիվների կառավարումից ստացված եկամուտը 68% աճ է գրանցել 2022-ին՝ 2021թ. 3-րդ եռամսյակի համեմատ: Հատուցումները 2022թ. 1-3 եռամսյակում նվազել են -72%-ով, քանի որ միանվագ վճարումների ամենամեծ մասը կատարվել է 2021թ.1-2 եռամսյակներում, իսկ 2022թ. հատուցվում են կանոնավոր ամսական պարտավորությունները:

ՄԼՐԴ ԴՐԱՄ	1 եռամ. 2021	2 եռամ. 2021	3 եռամ. 2021	4 եռամ. 2021	1 եռամ. 2022	2 եռամ. 2022	3 եռամ. 2022	1-3 եռամ. 2021	1-3 եռամ. 2022	1-3 եռամ. 2022-ի համեմ. 2021	% հարաբ 2021	% հարաբ 2022
(ԴՐԱՄ)												
Եկամուտ պարտադիր վճարներից	5.28	7.48	7.97	8.34	8.88	7.25	9.59	20.73	25.72	24%	83%	90%
Նվիրաբերություններ	0.42	0.36	0.26	0.24	0.17	0.13	0.11	1.05	0.41	-61%	4%	1%
Կամուրջ*	-	-	1.46	0.05	-	0.08	0.12	1.46	0.20		6%	1%
ՀՀԿԲ**	0.17	-	0.13	-	-	-	-	0.30	-	-100%	1%	0%
Ակտիվների կառավարում	0.54	0.43	0.39	0.48	0.42	0.62	1.25	1.36	2.28	68%	5%	8%
Այլ եկամուտներ տուգանքներից	-	-	-		-	-	-				0%	0%
ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏ	**6.41**	**8.28**	**10.21**	**9.12**	**9.47**	**8.07**	**11.07**	**24.90**	**28.62**	15%	**100%**	**100%**
Հատուցումներ	13.3	19.8	3.6	4.5	3.6	3.9	3.6	40.0	11.1	-72%	99.7%	98%
Վարչ. ծախսեր	-	-	0.05	-	0.05	0.06	0.06	-	0.17		0.00%	1.52%
Կապ. ծախսեր	0.02	0.02	0.00	0.06	0.00	0.00	0.00	0.05	0.00	-96%	0.11%	0.02%
Գործառնական ծախսեր	0.01	0.04	0.00	0.06	0.00	0.00	0.00	0.09	0.01	112%	0.22%	0.11%
ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	**13.34**	**19.85**	**6.94**	**4.61**	**3.66**	**3.98**	**3.66**	**40.13**	**11.30**	**-72%**	**100%**	**100%**

2022-Ի ՍԳ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆԸ 2017-2021ԹԹ. ՀԵՏ. ԱՄՓՈՓ ՊԱՏԿԵՐԸ

Զինծառայողների Ապահովագրության Հիմնադրամ

ԸՍՏ ՁԱՀ-Ի ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐԻ

- Պարտադիր վճարումների 36%-ը կստացվի 2022թ.
- Ակնկալվում է, որ նվիրաբերությունների 5%-ը կստացվի 2022թ.
- Ակտիվների կառավարման եկամտի 30%-ը կձևավորվի 2022թ.
- Հատուցումների 24%-ը կվճարվի 2022թ.

ՄԼՐԴ ԴՐԱՄ	2022 1-3 եռամ.	2022 ՍԳ	2017-2022 ՍԳ	% Համեմատ. 2022
Պարտադիր վճարներ	25.72	33.19	93.18	36%
Նվիրաբերություններ	0.41	0.49	9.06	5%
Ակտիվների կառավարում	2.28	2.88	9.69	30%
Հատուցումներ	11.11	17.27	71.42	24%

ԶԱՀ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԸ ԵՎ ՎՃԱՐՎԱԾ ՀԱՏՈՒՅՈՒՄՆԵՐԸ՝ 2022Թ. 1-3-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿՆԵՐԻՆ, ՏԱՐԵՍԿԶԲԻՑ ՄԻՆՉ ՕՐՍ (ՏՄՕ)

Զինծառայողների Ապահովագրության Հիմնադրամ

- **2017-2022թթ. 3-րդ եռամսյակի տվյալով տարեսկզբից մինչ օրս** ԶԱՀ-ը հատուցում է տրամադրել **4,855** շահառուների:

- **2022 թվականի 3-րդ եռամսյակում տարեսկզբից մինչև օրս** գրանցվել է **176 նոր դեպք**՝ ստորև բաշխված ըստ դեպքերի և շահառուների դասակարգման.

ԶՈՀՎԱԾ	ԱՆՀԱՅՏ ԲԱՑԱԿԱՅՈՂ	1-ին ԿԱՐԳ	2-րդ ԿԱՐԳ
62	96	4	14

2022Թ. ՏՄՕ 3-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԶԱՀ ՀԱՏՈՒՅՈՒՄՆԵՐՆ ԸՍՏ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԵՎ ԿՈՉՄԱՆ



2022Թ. 1-ԻՆ ԵՌԱՄՅԱԿԻՑ ՄԻՆՉԵՎ 3-ՐԴ ԵՌԱՄՅԱԿ, ՏՄՕ, ԶԱՀ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ԵՎ ՀԱՏՈՒՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆԸ

2017-2022թթ. ՏՄՕ, **4,855** շահառուները բաշխված են ստորև ներկայացված գրաֆիկական պատկերում ըստ անձնակազմի դասակարգման: Հատկանշական է, որ **44%-ը** ժամկետային զինծառայողներ են, իսկ **39%-ը՝** զորակոչված նորակոչիկներ, սպաներ և կամավորականներ:

2017-2022Թ. 3-ՐԴ ԵՌԱՄՅԱԿՈՒՄ, ՏՄՕ, ԶԱՀ-Ի ՀԱՏՈՒՑՈՒՄԸ ԸՍՏ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ



ԶԱՀ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄԸ 2017-2022Թ. 1-3-ՐԴ ԵՌԱՄՅԱԿՆԵՐՈՒՄ, ՏՄՕ



Զինծառայողների Ապահովագրության Հիմնադրամ

2017-2022թթ. 3-րդ եռամսյակային ժամանակաշրջանի ամփոփ պատկերը



176
նոր հատուցման դեպքեր մինչև 2022թ. 3-րդ եռամսյակը, տարեսկզբից մինչ օրս և 4,855 դեպքեր 2017թ. տարեսկզբից մինչև 2022թ. 3-րդ եռամսյակը

11.1
միլիարդ ՀՀ դրամի հատուցում 2022թ. 3-րդ եռամսյակում և 65.3 միլիարդ ՀՀ դրամի հատուցում 2017-ից մինչև 2022թ. 3-րդ եռամսյակը որպես ապահովագրություն զոհվածներին, անհայտ բացակայողներին և հաշմանդամության ապահովագրության իրավունք ունեցողներին

24%
պարտադիր վճարի աճ 2022թ. 3-րդ եռամսյակում՝
2021թ. 3-րդ եռամսյակի համեմատ

ԶԱՀ ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 2017-2022ԹԹ. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԱՐՎԱ 1-3-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿՆԵՐՈՒՄ

Զինծառայողների Ապահովագրության Հիմնադրամ

2017թ. մինչև 2022թ. 3-րդ եռամսյակը ԶԱՀ նվիրաբերությունները կազմել են շուրջ 9 միլիարդ ՀՀ դրամ: 2017-ից մինչև 2022թթ. 3-րդ եռամսյակը՝ տարեսկզբից մինչև օրս, նվիրաբերությունների ընդհանուր թիվը կազմում է գրեթե 80 հազար՝ միջին նվիրաբերության գումարը՝ 112,000 ՀՀ դրամ: Ամենաշատ նվիրաբերություններ կատարվել են 2020թ. պատերազմի ժամանակ և դրանից հետո:

Համեմատած տարեսկզբից մինչև 2021թ. 3-րդ եռամսյակը՝ ընթացիկ նվիրաբերությունները նվազել են -61%-ով: Նվիրաբերությունների թիվը և միջին չափը նույնպես նվազել են՝ համապատասխանաբար -53%-ով և -17%-ով: Դա բացատրվում է հետպատերազմյան իրավիճակով, քանի որ պատերազմի ժամանակ նվիրաբերությունները սովորաբար կտրուկ աճ են ցույց տալիս, ինչն արտահայտվել է 2020թ. արդյունքներում:

Նվիրաբերությունները կատարվել են բանկային փոխանցումներով, ինչպես նաև ԶԱՀ կայքի՝ **www.1000plus.am** միջոցով:

2017-2022թթ. նվիրաբերությունները ըստ արժույթի,

Արժույթը, ' 000 000	2017	2018	2019	2020	2021	2021 3-րդ եռ. ՏՄՕ	2022 3-րդ եռ. ՏՄՕ	2017-2022 3-րդ եռ.	2022 3-րդ եռ. ՏՄՕ 2021 3-րդ եռ. համ.
ՀՀ դրամ	94	89	113	4,380	752	2,090	187	5,616	-91%
Դոլար		0.002	0.005	4.83	0.88	0.6	0.42	6	-34%
Ռուբլի		0.08	0.08	115	7	5.2	0.44	122	-92%
Եվրո		0.0008	0.0004	0.80	0.12	0.10	0.03	1	-66%
2017-2022թթ. նվիրաբերությունները ՀՀ դրամով									
	94	95	115	6,976	1,290	1,047	413	8,983	-61%
Նվիրաբերություններ քանակ	445	1,050	1,312	41,769	25,976	20,824	9,842	80,394	-53%
Նվիրաբերությունների միջին չափը	0.212	0.090	0.088	0.167	0.050	0.05	0.04	0.112	-17%

2017-2022ԹԹ. ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴՐԱՄՈՎ, ՍԳ



ԶԱՀ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Insurance Foundation for Servicemen

ԶԱՀ-ը համագործակցում է տարբեր հիմնադրամների, ոչ պետական և բարեգործական կազմակերպությունների հետ՝ աջակցելով մեր զինվորներին և նրանց ընտանիքներին, նրանց ֆիզիկական, հոգեբանական և կրթական բարեկեցության ապահովման նպատակով:

Հաշվի առնելով շահառուների հետ կապի պահպանման կարևորությունը՝ ԶԱՀ-ի թիմը քայլեր է նախաձեռնել իր շահառուների հետագա զարգացման և սոցիալական ինտեգրման ծրագրերի մեկնարկի ուղղությամբ:

Այդ նպատակով 2022թ. հուլիսի 18-ին փոխըմբռնման հուշագիր է ստորագրվել Վաչե Վարդանյանի հետ: Արցախյան 44-օրյա պատերազմից հետո Վաչե Վարդանյանը հաստատվել է Արցախում՝ սահմանամերձ Սարուշեն գյուղում, և փորձել է օգնել մարդկանց հաղթահարել հետպատերազմյան դժվարությունները՝ շարունակաբար նախաձեռնելով և իրականացնելով ծրագրեր, որոնցից է Կարմիր Շուկա գյուղում բնակվող 7 տարեկան շուրջ 40 երեխաների համար նախատեսված Խոխա զարգացման կենտրոնը: Բացի Կարմիր շուկայի բնակիչներից, զարգացման կենտրոն կարողացան հաճախել նաև Թաղավարդի երեխաները: Սա Կարմիր Շուկայի քաղաքապետի հետ համագործակցության հիանալի ծրագիր էր, ով աջակցեց զարգացման ծրագրի շենքի վերանորոգմանը: Բացի «Կարմիր շուկա» ծրագրից Վաչեն կազմակերպել է նաև «Հայորդի» ճամբարը Լոռու մարզում՝ արցախցի 120 երեխաների համար:

ԶԱՀ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Insurance Foundation for Servicemen

Փոխըմբռնման հուշագիր Աշխատանքի եվ սոցիալական հարցերի նախարարության եվ Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամի եվ մի շարք ՀԿ-ների հետ:

Պայմանավորվածություն է ձեռք բերվել Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամի հետ համագործակցության վերաբերյալ փոխըմբռնման հուշագիր ստորագրելու մասին, որի նպատակն է ստեղծել թվային հանրային և մասնավոր հատվածի համագործակցության առցանց հարթակ:

2022թ. սեպտեմբերի 29-ին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, ԶԱՀ-ի և Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամի նախաձեռնությամբ՝ 25 տարբեր ԶԱՀ գործընկեր ՀԿ-ների մասնակցությամբ տեղի ունեցավ ընդլայնված կազմով հանդիպում նշված նպատակի շուրջ և քննարկվեց առցանց միասնական համագործակցության հարթակ ստեղծելու հնարավորությունը: Բոլոր մասնակիցները համակարծիք էին, որ հարթակը հիանալի գործիք կլինի բոլոր այն կազմակերպություններին համախմբելու համար, որոնք ինքնուրույն իրականացնում են սոցիալական, կրթական, առողջացման և այլ ծրագրեր: Հանդիպման ժամանակ վերահաստատվեց, որ նշված հարթակը նպատակային ուղղորդում կտա շահառուներին՝ զինծառայողներին և նրանց ընտանիքների անդամներին նրանց կարիքներին համապատասխանող ծառայությունների, կրթական և վերապատրաստման ուսումնական ծրագրերի մասին:

Հանդիպմանը ներկա էին հետևյալ կազմակերպությունների ներկայացուցիչները.

- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
- Զինծառայողների ապահովագրության հիմնադրամ
- Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամ
- Զինվորի տուն ՀԿ
- Նոր էջ ՀԿ
- Հերոսների վերականգնողական քաղաք ՀԿ
- «Արեն Մեհրաբյան» բարեգործական հիմնադրամ
- Ուսուցման առաքելություն ՀԿ
- 4090 բարեգործական հիմնադրամ
- Կարո Հովագիմյան բարեգործական հիմնադրամ
- Հավերժ ազգ հիմնադրամ Հայաստան
- KASA շվեցարական մարդասիրական հիմնադրամ
- «ՌեԱրմենիա» բարեգործական հիմնադրամ
- Գյումրու տեխնոլոգիական կենտրոն

ՀԱՀ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Insurance Foundation for Servicemen

- Gateway Armenia բարեգործական ՀԿ
- Իմ քայլը հիմնադրամ
- «Հայկական Կարիտաս» բարեգործական ՀԿ
- Հայ առաջադեմ երիտասարդություն ՀԿ
- «Բարձունք» գիտակրթական-ռազմավարական ՀԿ
- Հայաստանի պետական մանկավարժական համալսարան
- ԵՊՀ Կիրառական հոգեբանության կենտրոնի զինծառայողների և պատերազմից տուժածների հոգեսոցիալական վերականգնողական ծառայություն
- Գլոբալ Շեյփերս Երևան Հաբ
- ՝Աքսես թու Քեյր՛ բարեգործական ՀԿ
- Հայ վիրավոր հերոսների հիմնադրամ
- Սոֆթ Կոնտրակտ ընկերություն
- Պրոգրես կրթական ծրագիր
- Երեմյան նախագծային ընկերության, Երեմյան ակադեմիա

Համատեղ հանդիպման արդյունքում միասնական հարթակ ստեղծելու գաղափարը ողջունեցին բոլոր մասնակիցները: Համագործակցության մասին հուշագիրը ստորագրեցին մասնակիցների մեծ մասը, և պայմանավորություն ձեռք բերվեց ստորագրել այն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամի հետ, նախարարությունում համապատասխան ընթացակարգը պահպանելուց հետո: Պայմանավորվածություն է ձեռք բերվել մեկամսյա ժամկետում մշակել ծրագրի տեխնիկական նկարագիրը, այնուհետև այդ փաստաթուղթը շրջանառել մասնակիցների միջև՝ հետադարձ կարծիքների համար: Պայմանավորվածություն ձեռք բերվեց նաև մասնակիցների հետ կազմակերպել կանոնավոր համակարգող հանդիպումներ՝ ծրագրի ղեկավարների, ինչպես նաև միմյանց գործունեությանը ծանոթանալու նպատակով:

Այրուձի մանկական ակումբ 6-օրյա ամառային ճամբար

2022թ. հուլիսի 11-17-ը Այրուձի մանկական ակումբը մեկնարկեց իր հատուկ թերապիայի ծրագիրը՝ պատերազմից տուժած երեխաների համար: Ակումբի աջակցությամբ խոցելի երեխաներին հնարավորություն տրվեց լինել բնության գրկում և կտրվել առօրյայից՝ հետպատերազմյան սթրեսը հաղթահարելու համար:

Ծրագիրը ներառում էր կենդանիների հետ շփում, ջրային խաղեր, խեցեգործության դասեր, երեկոյան ժամանց խարույկի շուրջ (կիթառ, երգ) և քայլարշավ: Երեխաները ճամբարում անցկացրին 6 անմոռանալի օրեր առանց իրենց էլեկտրոնային սարքավորումների և վայելեցին բնությունն ու ընկերական միջավայրը, ինչպես նաև միմյանց ընկերակցությունը: Ծնողների մեծ մասն իր գնահատանքն արտահայտեց կազմակերպիչներին:

Այրուձի ակումբը գործում է շուրջ 40 տարի՝ ծառայելով պատերազմից և երկրաշարժից տուժած երեխաներին՝ ճամբարում թերապիայի և հատուկ ծրագրերի միջոցով ճգնաժամի սթրեսը հաղթահարելու համար: Կազմակերպչի հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել 2023թ. ճամբարային ծրագրերում ԶԱՀ-ի շահառուներին ներգրավելու մասին:

Հայորդի ամառային ճամբար
18-26 օգոստոսի, 2022թ.

Լոռու մարզի Գուգարք ճամբարում տեղի ունեցավ Հայորդի ամառային ճամբարը: Հայորդին կրում է Արցախի հերոս, գեներալ Սերգեյ Շաքարյանի անունը: Ճամբարը գործում է ոչ միայն ժամանցի, այլ նաև հայրենասիրական գիտակցության բարձրացման, պատմամշակութային ժառանգության հետ ծանոթանալու, ազգային երգ ու պարի, արվեստի դասերի համար: Ծրագիրը ֆինանսավորվում և իրականացվում է Արցախյան պատերազմում զոհված հայերի ընտանիքների, հայրենակիցների, ԶԱՀ գործընկեր Վաչե Վարդանյանի նախաձեռնությամբ և Զինծառայողների ապահովագրության հիմնադրամի համատեղ ջանքերով: ԶԱՀ-ի շահառուները կարողացան մասնակցել ճամբարին:

Ճամբարին մասնակցել են 44-օրյա արցախյան և 4-օրյա ապրիլյան պատերազմների զոհված և անհայտ բացակայող զինծառայողների և այլ խոցելի խմբերի 120 երեխաներ: Որպես ջոկատավար ճամբարին մասնակցել են զոհված զինծառայողների կանայք և պատերազմի ընթացքում տարբեր աստիճանի վնասվածքներ ստացած զինծառայողներ: Տարբեր տարիքային խմբերի երեխաները, ովքեր կիսում են նույն կորստի և ցավի զգացումը, ճամբարում համախմբվեցին մեկ գաղափարի շուրջ, որ իրենք մենակ չեն և միասին կարող են հաղթահարել դժվարությունները:
Ճամբարը հիանալի առիթ էր երեխաներին կարճ ժամանակով ընտանիքների առօրյա սթրեսային ապրելակերպից կտրելու համար, որոնք զոհաբերել են իրենց սիրելիներին և բարեկեցությունը՝ ևս մեկ անգամ ցույց տալով, որ համայնքը հոգում է նրանց մասին և նրանց առօրյան լցնելով ուրախությամբ և հայրենասիրական ոգով:

Նախատեսվում է «Հայորդի» ճամբարը դարձնել ավանդական և 2023թ. կազմակերպել նմանատիպ ճամբար՝ ավելի շատ մասնակիցներով և ավելի երկար ժամանակով:

ԶԱՀ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂԻՆ ԴԵՊԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆԸ

Զինծառայողների Ապահովագրության Հիմնադրամ

2017թ. հիմնադրման ժամանակ ԶԱՀ-ը կառավարվում էր Հայաստանի Կենտրոնական բանկի կողմից կամավոր հիմունքներով: ԶԱՀ-ը չուներ հատուկ թիմ կամ գրասենյակային տարածք: 2020թ. Արցախյան պատերազմը ցույց տվեց, որ ԶԱՀ-ը պետք է դառնա անկախ կազմակերպություն: Համապատասխանաբար, ձևավորվեց նվիրված թիմ և ընտրվեց արհեստավարժ հոգաբարձուների խորհուրդ՝ հիմնադրամի գործունեության վերահսկողությունը և կառավարումն ապահովելու համար: Նաև վարձակալվեց և վերանորոգվեց գրասենյակային տարածք, կառուցվեցին բոլոր անհրաժեշտ ենթակառուցվածքները:

Մինչ 2022թ. 3-րդ եռամսյակը կատարված աշխատանքները.

ԹԻՄ

- 16 հոգի
- 5 Խորհրդի անդամներ վերընտրվեցին

ՏՏ ԵՆԹԱԿԱՌՈՒՅՑ

- Հատուցման
- Կենտրոնական բանկից ամբողջական անջատման գործընթաց

ԳՐԱՍԵՆՅԱԿԱՅԻՆ ՏԱՐԱԾՔ

- Վարձակալում, նորոգում
- Տեխնիկական վերասարքավորում

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒՄ

- Մարդկային ռեսուրսների կառավարում
- Հաշվապահություն
- Թեժ գիծ
- ՏՏ անվտանգություն

ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Շահառուների դիմումների հաստատման գործընթացի պարզեցում
- Շահառուների բազայի ընդլայնում
- Կազմակերպության ներքին ձեռնարկի մշակում

ԱՈՒԴԻՏ 2021 – ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

Զինծառայողների Ապահովագրության Հիմնադրամ

ԶԱՀ 2021թ. աուդիտն իրականացրել է Գրանթ Թորնթոն ՓԲԸ-ն, իսկ ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների («ՖՀՄՍ») համաձայն, որոնք հրապարակվել են Միջազգային հաշվապահական ստանդարտների խորհրդի («ՄՀՍԽ») կողմից: Դրանք պատրաստվել են այն ենթադրությամբ, որ հիմնադրամը գործում է շարունակական հիմունքներով: Ամբողջական զեկույցը կարող եք գտնել ստորև.

Հազար դրամով	Ծանոթ.	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներ			
Ոչ-ընթացիկ ակտիվներ			
Գույք և սարքավորում		156,733	-
Ոչ նյութական ակտիվներ		3,436	-
Ներդրումներ պետական պարտքային արժեթղթերում	4	1,402,309	3,342,575
Բանկերում տեղաբաշխված միջոցներ	5	7,303,869	4,721,415
		8,866,347	8,063,990
Ընթացիկ ակտիվներ			
Դեբիտորական պարտքեր		6,974	-
Ներդրումներ պետական պարտքային արժեթղթերում	4	1,884,276	50,198
Բանկերում տեղաբաշխված միջոցներ	5	10,497,727	16,732,791
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	6	2,470,298	9,460,069
		14,859,275	26,243,058
Ընդհանուր ակտիվներ		23,725,622	34,307,048
Պարտավորություններ			
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Հատուցման պարտավորություններ	7	102,912,893	23,694,770
Վարձակալական պարտավորություններ		33,651	-
		102,946,544	23,694,770
Ընթացիկ պարտավորություններ			
Հատուցման պարտավորություններ	7	12,176,620	3,309,737
Վարձակալական պարտավորություններ		40,343	-
Կրեդիտորական պարտքեր		9,129	-
		12,226,092	3,309,737
Զուտ ակտիվներ			
Այլ համապարփակ եկամտի միջոցով իրական արժեքով չափվող արժեթղթերի վերագնահատման պահուստը	8	(29,979)	67,349
(Կուտակված վնաս)/չբաշխված շահույթ		(91,417,035)	7,235,192
		(91,447,014)	7,302,541
Ընդհանուր պարտավորություններ և զուտ ակտիվներ		23,725,622	34,307,048

ԱՈՒԴԻՏ 2021Թ. – ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ԵԿԱՄՏԻ ՄԱՍԻՆ

Զինծառայողների Ապահովագրության Հիմնադրամ

Հազար դրամով	Ծանոթ.	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Եկամուտ			
պարտադիր վճարներից և նվիրաբերություններից եկամուտ	9	32,173,532	17,110,134
Ֆինանսական եկամուտ	10	1,841,151	2,424,133
Այլ եկամուտ		240	650
		34,014,923	19,534,917
Ծախսեր			
Հատուցման ծախսեր		(123,280,125)	(28,233,882)
Աշխատակիցների նպաստներ		(76,326)	-
Մաշվածություն և ամորտիզացիա		(18,050)	-
Շահույթ/(վնաս) ակնկալվող վարկային կորուստների գծով պահուստի վերաչափումից	11	51,881	(62,898)
Ֆինանսական ծախսեր	12	(9,292,770)	(775,810)
Այլ ծախսեր		(51,497)	(16)
Զուտ վնաս փոխանակման տարբերություններից		(263)	-
		(132,667,150)	(29,072,606)
Տարվա արդյունք		(98,652,227)	(9,537,689)
Այլ համապարփակ եկամուտ			
Հոդվածներ, որոնք հետագայում կարող են վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս			
Այլ համապարփակ եկամտի միջոցով իրական արժեքով չափվող արժեթղթերի իրական արժեքի փոփոխություններից զուտ վնաս		(89,886)	(91,086)
Այլ համապարփակ եկամտի միջոցով իրական արժեքով չափվող արժեթղթերի ակնկալվող վարկային կորուստների պահուստի փոփոխություններ		(7,442)	9,963
Տարվա այլ համապարփակ կորուստ		(97,328)	(81,123)
Տարվա ընդհանուր համապարփակ կորուստ		(98,749,555)	(9,618,812)

ԱՈՒԴԻՏ 2021 – ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՁՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հազար դրամով	Այլ համա-պարփակ եկամտի միջոցով իրական արժեքով չափվող արժեթղթերի վերագնահատման պահուստը	Չբաշխված շահույթ/ (կուտակված կորուստ)	**Ընդամենը**
2020թ. հունվարի 1-ի դրությամբ	**148,472**	**16,772,881**	**16,921,353**
Տարվա արդյունք	-	(9,537,689)	(9,537,689)
Տարվա այլ համապարփակ կորուստ	(81,123)	-	(81,123)
Տարվա ընդհանուր համապարփակ կորուստ	(81,123)	(9,537,689)	(9,618,812)
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**67,349**	**7,235,192**	**7,302,541**
Տարվա արդյունք	-	(98,652,227)	(98,652,227)
Տարվա այլ համապարփակ կորուստ	(97,328)	-	(97,328)
Տարվա ընդհանուր համապարփակ կորուստ	(97,328)	(98,652,227)	(98,749,555)
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**(29,979)**	**(91,417,035)**	**(91,447,014)**

ԱՈՒԴԻՏ 2021 – ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ

Զինծառայողների Ապահովագրության Հիմնադրամ

Հազար դրամով	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ստացված պարտադիր վճարներ և նվիրաբերություններ	32,173,532	17,110,134
Տրամադրված հատուցումներ	(44,483,704)	(8,029,925)
Աշխատանքային ծախսեր	(50,870)	-
Այլ եկամուտ	88	650
Այլ ծախսեր	(95,041)	(16)
Զուտ կանխիկ դրամը/(օգտագործված) գործառնական գործունեությունից	(12,455,995)	9,080,843
Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից		
Գույքի և սարքավորումների ձեռքբերում	(88,455)	-
Բանկերում տեղաբաշխված միջոցներ	(12,825,000)	(14,345,914)
Ներդրումներ պետական պարտքային արժեթղթերում	-	(198,346)
Բանկերում տեղաբաշխված միջոցների մարում	15,770,000	12,447,777
Պետական պարտքային արժեթղթերում ներդրումների մարումից ստացված եկամուտները	-	300,000
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներից ստացված տոկոսներ	2,323,286	1,886,366
Պետական պարտքային արժեթղթերում ներդրումներից ստացված տոկոսներ	285,500	290,500
Զուտ կանխիկ՝ ներդրումային գործունեությունից	5,465,331	380,383
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/(նվազում)	(6,990,664)	9,461,226
Արտարժույթի ազդեցությունը կանխիկի վրա	(264)	-
Կանխիկի և դրամական միջոցների համարժեքների վրա ակնկալվող վարկային կորստի ազդեցությունը	1,157	(1,157)
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեսկզբին	9,460,069	-
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեվերջին	2,470,298	9,460,069

Զինծառայողների
Ապահովագրության
Հիմնադրամ

ՄԻԱՑԵՔ ՄԵՋ

ՃԱՆԱՉԵՔ ՄԵՋ

Իմացեք ավելին Զինծառայողների ապահովագրության հիմնադրամի մասին: Այցելեք մեր կայքը, հետևեք մեզ սոցիալական ցանցերում:

ՊԱՏՄԵՔ ՄԵՐ ՄԱՍԻՆ

Պատմեք մեր առաքելության և մեր կատարած աշխատանքի մասին:

ԱՋԱԿՑԵՔ ՄԵՋ

Կատարեք ձեր նվիրաբերությունը և աջակցեք զինվորներին ու նրանց ընտանիքներին, ովքեր զոհաբերել են ամենակարևորը հանուն Հայրենիքի:

ՆՎԻՐԱԲԵՐԵԼ